

# Հայկական հարցի հովովոյթը 1921 թ.ի Լոնտոնի եւ Մոսկուայի խորհրդածոյրովներուն

ԶԱԻԷՆ ՄՍԸՐԼԵԱՆ

1920 թ.ի երկրորդ կիսուն քաղաքական իրադարձութիւնները իրար յաջորդեցին Հայաստանի մէջ: Այսպէս, մինչ Հայաստանի Հանրապետութիւնը կը բանակցէր Սովետական Ռուսիոյ հետ, 10 Օգոստոսի 1920 թ.ին Անդանդի պետութիւնները կը պարտադրէին Սեւրի դաշնագիրը Օսմանեան Թուրքիոյ, որով Թուրքի վրայ Արեւմտեան Հայաստանի մէկ կարեւոր մասին հայապատկան ըլլալը կը հռչակուէր: Դաշնագրի ստորագրութենէն առաջ իսկ Անդանդի պետութիւնները գիտէին թէ կարելի պիտի չըլլար այդ դաշնագրի պայմաններու իրադործումը, բացի եթէ զէնքի ուժով ուզէին այդ ընել: Իսկ զինեալ ուժի գործածութեան դէմ էին, ու նոյնիսկ իրենցմէ քեմալականները սիրաշահել ուզողներ կային: Այլադան պատրուակներ օգտագործելով, 23 Սեպտեմբերին, Քեաղիմ Քարապեքիրի զլիսաւորած 30,000 հոգինոց միլիական բանակը կը յարձակէր Հայաստանի Հանրապետութեան դէմ: Յաջորդաբար Թուրքերու ձեռքը կ'ընթացին Սարղամիշ, Կաղզուան, Կարս, եւ զինադուլի պայմաններու համաձայն՝ Ալեքսանդրապոլ քաղաքը: Հայաստանի Հանրապետութեան քաղաքական վերջին աքտը կ'ըլլար Ալեքսանդրապոլի դաշնագրի ստորագրութիւնը, Երեւանի մէջ Սորհրդային իշխանութեան հաստատութենէն ետք: Ըստ դաշնագրին, Թուրքիոյ զինուորական զբաւման ենթակայ Կարսի նահանգը եւ Սուրմալուն վիճելի կը համարուէին մինչեւ երեք տարի, որուն ընթացքին պէտք էր հանրաքուէ կատարել (յօդ-

ուած 2), իսկ հայերը կը հրաժարէին Սեւրի դաշնագրէն (յօդուած 3):

Այս բախտորոշ շրջանին երբ Հայաստան ճակատագրական օրեր կ'ապրէր, Անդանդի պետութիւնները հայկական հարցին կը մօտենային ոչ գործնական աջակցութիւն բերելու, այլ՝ «Ջուր ձեծեւրու» ձեւով: 1920 թ.ի 26 Նոյեմբերէն 4 Դեկտեմբեր, Լոնտոնի մէջ կը կայանար բրիտանական, Ֆրանսական եւ իտալական կառավարութիւններու ներկայացուցիչներու երկրորդ խորհրդակցական ժողովը: Այս ժողովի 3 Դեկտեմբերի նիստին, երբ արդէն Հայաստան Ալեքսանդրապոլի դաշնագրով նուաստացած էր, սոյն դաշնակից պետութիւնները կ'ընդգիմանային Հայաստանի Ազգերու Լիկայի մէջ ընդունուելուն, հետեւեալ պատճառներով.

«Ա. Սեւրի պայմանագրի 88-րդ յօդուածից բխող իրական դժուարութիւնների պատճառով.

«Բ. Քանի որ Հայաստանի սահմանները զեռեւս որոշուած չեն»(1):

Նորահաստատ Խորհրդային Հայաստանի Յեղափոխական Կոմիտէն իր 29 Նոյեմբերի 1920 թ.ի յայտարարութեամբ յոյս կը կապէր որ «խմպերիալիստական լծից ազատագրուող ժողովրդական Տաճկաստանը (Թուրքիան) մեզ եւս իր հետ Սեւրի դաշնագրի հակառակորդ համարելով, մեզ եղբայրական ձեռք է մեկնելու այժմ...»(2): Հայ Յեղիմըր յոյս ունէր որ Թուրքիան հողային հարցով զիջումներ ընէր նոր վարչաձեւի տիրացած Հայաստանին: Այս լաւատես մօտեցումը ազգայնամոլ, Վարդարաբ ու բռնագրաւիչ քեմալականներուն հանդէպ կու դար այն համոզումէն թէ «արեւելքը յեղափոխականացնող «աշխատաւոր Թուրքիան» Խորհրդային Հայաստանին բարեացակամութեամբ պիտի մօտենար: Խորհրդահայ վարիչները շատ շուտով յուսախար կ'ըլլային: Խորհրդային Հայաստանը նոր խորհրդաժողով հրաւիրելու եւ հայ-թրքական յարաբերութիւնները կարգաւորելու վերաբերեալ Յեղիմի պահանջքը Թուրքեր զիւանագիտօրէն կը մերժէին, պատասխանելով թէ մօտ ազադային Թուրքիա Խորհրդային Ռուսիոյ եւ Հայաստանի ներկայացուցիչներուն հետ քննութեան կ'առնէ «Կովկասեան ինդիւրներն ընդհանրապէս»: Խոր-

1. Հայաստանը Միջազգային Դիւանագիտութեան եւ Սովետական Արաբիին Քաղաքականութեան Փաստաթղթերում (1828-1923), խմբագրութեամբ Պրոֆ. Տ. Ս. Կիրակոսեանի, Երեւան, 1972, էջ 689: (Յետ այսու՝ Հայաստանը Փաստաթղթերում):

2. Դեկտեմբերեան Սոցիալիստական Մեծ Ռեւոլուցիան եւ Սովետական Իշխանութեան Յաղթանակը Հայաստանում, Երեւան, 1960, էջ 405:

հըրդային Հայաստանի վարիչներու առաջնահերթ ջանքերէն մին կ'ըլլար Ալեքսանդրապոլի զաշնադրի վերացման համար աշխատիլ: 5 Դեկտեմբերի 1921 թ.ին Հայ Յեղկոմի նախագահ Սարգիս Կասեանը(3) եւ Հայաստանի մէջ Սովետական Ռուսիոյ ներկայացուցիչ Լեկրանը Թուրքիոյ մօտ Սով. Ռուսիոյ լիազօր ներկայացուցիչ Մզիվանիին կը հետադրէին որ սնդէ Սով. Ռուսիոյ միջնորդութեան ճանաչման անհրաժեշտութեան Ալեքսանդրապոլի զաշնադրի վերացման եւ Յեղկոմի պատուիրակութեան հետ նոր բանակցութիւններու անհրաժեշտութեան վրայ(4):

Սորհրդային Հայաստանի կառավարութիւնը 10 Դեկտեմբերի 1920 թ.ին յատուկ յուշագրով, հասցէագրուած՝ քեմալական արտաքին գործոց նախարար Ահմէտ Մուխթարին (եւ պատճէնը ուղարկուած Արեւելեան ռազմաճակատի հրամանատար Քեաղիմ Քարապեքերին եւ Ալեքսանդրապոլի ՌՍՖՍ-ի ներկայացուցիչին) կը յայտնէր թէ կը սպասէ որ Թուրքիան չեղեալ համարէ Ալեքսանդրապոլի զաշնադիրը, նպատակ ունենալով մօտ ապագային մէջ երկու ժողովուրդներու միջեւ նոր յարաբերութիւններ հաստատել եւ հնարաւորութիւն տալ երկու ժողովուրդներու խաղաղ աշխատանք սկսելու, կ'առաջարկէ նաեւ շուտով խորհրդաժողով հրաւիրել՝ յեղափոխական յեղաշրջման նոր պայմաններէ բխող համաձայնութեան գալու համար(5):

Սորհրդային Հայաստանի կառավարութիւնը գործնական քայլերու ալ կը դիմէր: Զիչերինի ուղղուած Լենինի 14 Դեկտեմբերի 1920 թուակիր մէկ նամակէն կը հասկցուի որ 13 Դեկտեմբերի 1920 թ.ին Սահակ Տէր Գարբիէլեանը Լենինի մօտ կը ներկայանայ եւ կը յայտնէ թէ «կոտորածի ահեղ վտանգ» կայ եւ «(Ա.) թէ 600,000 հայ զաղթականներ են զոհուում: (Բ) թէ առանց Կարսի Բաքուն վտանգի մէջ է»:

Լենին, որ որոշ յոյսեր կապած էր քեմալական ազգայնական շարժումին՝ իր յեղափոխական շարժումի մը, 14 Դեկտեմբերին կը

3. Սարգիս Կասեան ֆեմալականներու մասին հետեւեալը գրած է. «Մուստաֆա-Քեմալեան շարժումը, որին ֆեմալականները անուանում են «ազգային»... ըստ տանիկ պորտաբոյժ փաշաների, տգրուկ պաշտօնեաների եւ զանազան քալանչիների ձգտումն է պահպանել իրենց անբաժան գերիշխանութիւնը այսպէս կոչուած Տանկաստանում, նրանց շարժումն է դէպի Անդրկովկաս» (Ս. Կասեան, *Ընտրել երկեր*, Երեւան, 1967, էջ 153):

4. Է. Ա. Զոհրաբեան, *Հայ-թուրքական Յարաբերութիւնների Պատմութիւնը* (1920 թ. Նոյեմբեր - 1921 թ. Փետրուար), «Լրաբեր Հասարակական Գիտութիւնների», Երեւան, 1971, քիւ 10 (346), էջ 16:

5. *Հայաստանը Փաստաթղթերում*, էջ 466:

դրէ Ջիչերինի. «Հարկաւոր է, ըստ իս, անջատել (Ա.)—ը (Բ)—ից, եւ ամէն կերպ ողնել (Ա.)—ում»(6) : Այլ խօսքով՝ Սովետական Ռուսիան կարսի համար Թուրքիոյ վրայ զօրաւոր ճնշում պիտի չբանեցնէր, ոչ ալ պատերազմէր :

Սովետական Ռուսիոյ կառավարութեան այս դիրքը աւելի կը պարզարանուէր Սորճրդային Հայաստանի պետական իշխանութիւններուն, երբ Սորճրդային Հայաստանի արտաքին դործոց նախարար Ալեքսանդր Բեկզատեան 26 Գեկտեմբերի 1920 թ.ին հեռաձայնային խօսակցութիւն կ'ունենար Մոսկուայէն նոր վերազարձած Հայկական ՍՍՀ գեկավարներէն Ասքանազ Մոսովեանի եւ Ազրպէյճանի մօտ Հայկական զիւանդակտական ներկայացուցիչ՝ Աթարեկովի հետ : Սոյն խօսակցութիւնը ըստ երեւոյթին յրտեսուած է Անդրկովկասի մէջ բրիտանական ներկայացուցիչ՝ Գնդապետի տեղակալ Սթօքսի միջոցով, եւ 2 Փետրուարի 1921 թ.ին Լոնտոն՝ Զորէյն Օֆիս եւ Կ. Պոլսոյ բրիտանական բարձր գոմիսերութեան «գաղտնի» մակագրութեամբ փոխանցուած(7) :

Սօսակցութեան ընթացքին Մոսկուայէն կը յայտնէ թէ այցելած են Լենինի, Թրոցքիի, Ջիչերինի եւ Գարախանի, բայց չեն կրցած տեսնել Ստալինը, որ հիւանդ էր : Լենին իրենց յայտնած է որ «Անդարայի կառավարութեան ընկերային կարեւորութիւնը կ'ըմբռնէ եւ համաձայն է որ այս ոյժը կոմունիզմի թշնամի է, բայց թէ համոզուած է թէ թրքական զիւղացիութեան մօտ անհանդարտութիւն մը կայ եւ իր փաստ կը նշէ Գոնիայի բուլշեւիկեան ապստամբութիւնը : Իր կարծիքով եթէ կարմիր բանակէ միաւորներ թրքական բանակին հետ չլիման գան, այս վերջիններուն ի վնաս պիտի ըլլայ» : Ապա՝ Մոսկուայէն կը յայտնէ թէ մեր բոլոր յստակ եւ մեկին ժխտումներուն, թէ այս կարելի չէ ակնկալել, Լենին կը յայտնէր թէ «ինք այլապէս կը խորհի», աւելցնելով թէ «հասկցէք ընկերներ, նոյնիսկ եթէ այս չըլլար պարագան, այս պահուս Ռուսիան չ'ուզեր եւ չի կրնար կրօնել, մասնաւորաբար Կարսի վրայ» : Մոսկուայէն կ'աւելցնէ թէ Լենին կարսը թրքական քաղաք կը նկատէ : Մոսկուայէն կը յայտնէ թէ երբ շեշտեցինք հայ ժողովուրդի սարսափելի կացութիւնը եւ որ հայ աշխատաւոր գասակարգին առջեւ Կոմունիստ կուսակցութիւնը կրնայ վարկարեկուել, Լենին կը յայտնէ թէ պատրաստ է ատոր, ու կ'աւելցնէ թէ ժամանակաւորապէս պարտաւորուած ենք զոհելու հայ աշ-

6. Նոյնը, էջ 468 :

7. Translations of crown-copyright records in the Public Record Office, London, appears by permission of the controller of H. M. Stationery Office, F. O. 371/6266 E 2303.

խտաւոր դասակարգերու շահերը «Համաշխարհային Յեղափոխութեան» շահերուն(8) :

Մինչ այդ թուրքերը Հայկական ՍՍՀ-ի 10 Դեկտեմբերի 1920 թ-ի յուշակիրը ստանալէ ետք մտահոգ էին թէ որքանով Մոսկուա թիկունք պիտի կանդնէր նորահաստատ Սովետական Հայաստանի այս ծրագրին : Ուստի՝ 15 Դեկտեմբերի 1920 թ-ին, Ահմէտ Մուխթար, Չիչերինին յղած իր հեռագրին մէջ կը հարցնէր. «Երեւանում սովետական իշխանութեան հաստատումից յետոյ Մոսկուայում ինչպիսի՞ քաղաքականութիւն են ուղղում վարել Հայկական հարցի վերաբերեալ» : Ապա կը յայտնէր թէ Ալեքսանդրապոլի զաշնագիրը բռնի հաշտութիւն չէր, այլ հիմնուած «ժողովուրդների ինքնորոշման իրաւունքի վրայ», ապա՝ իր բուն մտահոգութիւնը կը պարզէր. «Մեզ լուրեր են հասնում, թէ Հայաստանում կարգերի փոփոխման հետեւանքով, որը ամենայն հաւանականութեամբ ժամանակաւոր է, Գուք ցանկանում էք վերանայել վերոյիշեալ պայմանագիրը եւ Հայաստանին վերագարձնել թուրք բնակչութեամբ տերիտորիաները, որի համար այդ որոշումը մօտ ապագայում բնաջնջման նախերգանք կը հանդիսանայ»(9) :

Չիչերին իր պատասխանին մէջ ի միջի այլոց կ'ըսէր. «Սովետական կառավարութիւնը հաստատ համոզուած է, որ Հայաստանի նոր սովետական կառավարութիւնը... արմատապէս փոխել է իր քաղաքականութիւնը Հայաստանի մուսուլման բնակչութեան նկատմամբ... Ռուսաստանի կառավարութիւնը նմանապէս հաստատ համոզուած է, որ թուրք ժողովուրդը եւ թուրքական կառավարութիւնը Հայաստանի սովետական կառավարութեանն ու բանուորներին եւ զելզացիներին կը դիտեն որպէս բարեկամ կառավարութիւն ու բարեկամ ժողովուրդ եւ որպէս նրանց ու սովետական հանրապետութիւնների նկատմամբ բարի զղացմունքների վկայութիւն, անհրաժեշտ միջոցներ կը ձեռնարկեն որպէսզի թուրքական բանակը անյապաղ մաքրի Ալեքսանդրապոլի օկրուզը (մարզը) եւ Կարսի օկրուզից հիւսիս ու արեւելք ընկած շրջանները, որոնց օկուպացիան (զբաւման տակ պահուիլը), սակայն, մեր կարծիքով չպէտք է կանխորոշել հայ-թուրքական սահմանը»(10) :

Քեմալական թուրքիոյ ղեկավարները այնքան ալ նպաստաւոր չէին գտած Չիչերինի այս պատասխանը, եւ ըստ երեւոյթին անտեղ-

8. Նոյնը :

9. Էդ. Զոհրաբեան, Մոսկուայի Ռուս-թուրքական Կոնֆերանսի Նախօրէին, «Քանիք Երեւանի Համալսարանի», Երեւան, 1971, քիւ 3 (15), էջ 165 :

10. Նոյնը, էջ 165-166 :

եակ Սովետական Ռուսիոյ Կարսի Հարցով Ղեջումի քաղաքականութեան, ու մտահոգ իրենց արեւելեան սահմաններու Հարցով, վարպետ, Երկղիմի քաղաքականութեան մը կը ղեմէին: Այսինքն՝ կը մտահոգին Անգանդի պետութեանց եւ Սովետական Ռուսիոյ եւ իւրաքանչիւրին՝ թուրքերու յատուկ կեղծաւոր զիւանազխութեամբ վախ կու տային միւս կողմին քաղաքական բարեկամ ըլլալու, որպէզի սոսաւեյապոյն կերպով օգտուէին իրենց ազգայնական նպատակներու իրականացման մէջ:

Անդին, Անգանդի պետութիւնները իւրաքանչիւրը իր շահուն հետամուտ, իրարու հետ ղժուարութիւն ունէին համաձայն ըլլալու թուրքիոյ վերարեւոյ Հարցերուն մէջ: Թուրքերը հոս եւս կրցան այս տարրերու թիւններէն օգտուիլ: Անգանդի պետութիւնները այլազան նկատումներով կ'ուզէին՝ Օգոստոս 1920 թ.ի, դեռ մեց ամիս առաջ ստորագրուած Սեւրի դաշնագիրը վերատեսութեան ենթարկել: Այսուհանդերձ իւրաքանչիւրի շարժառիթը տարբեր էր: Անգլիան թէեւ համաձայն էր, սակայն կ'ուզէր որ այդ վերանայումը ուշանայ, քանի կը կարճէր թէ ժամանակը, որ կը ծանրացնէր թուրքիոյ տնտեսական գրոթիւնը, կ'աշխատէր ի նպաստ Անգլիոյ: Այս տեսակէտը արտայայտած էր վարչապետ Լոյս ձորձ 22 Դեկտեմբերի 1920 թ.ին, Անգլիոյ խորհրդարանին մէջ(11): Ֆրանսան կ'ուզէր իր գրաւած արարական հողերը պահելով հանդերձ համաձայնիլ քեմալականներուն հետ իր այլազան շահերը պահպանելու մտօր: Անգլիան եւ Ֆրանսան հակասական գիրքերու վրայ գտնուելով հանդերձ հետամուտ էին մէկ կողմէ Սովետական Ռուսիոյ հետ քեմալական թուրքիոյ քաղաքական գործակցութեան կանխումը ապահովելու, եւ միւս կողմէ կ'ուզէին Սովետական Ռուսիան պատնիշել հարաւային կողմէն(12):

Քեմալական թուրքերն ալ զիտակցելով իրերու այս վիճակին, Սովետական Ռուսիոյ բարեկամութիւն կը կեղծէին իրենց շարժումը ազգային-ազատագրական, հակա-սուլթանական, հակա-իմբերիալիստ, յեղափոխական ձեւացնելով, ու հուսկ՝ կոմունիստներուն եւ աշխատաւոր ու զիւղացի դասակարգին բարեկամ ներկայանալով ծածկել կը ջանային իրենց զուտ ազգայնական ու փոքրամասնութիւններու նկատմամբ ցեղասպան քաղաքականութիւնը: Միաժամանակ, Անգանդի պետութիւններուն ներքին հակամարտութիւնները եւ շահերու տարբերութիւնները շահագործելով, ասոնց կը ներկայանային իրր բոլշեւիզմի դէմ պատուար: Իրենց այս երկղիմի քաղաքականութեան նպատակն էր, բացի արարական երկիրներու կորուստէն,

11. Նոյնը, էջ 168:

12. Նոյնը:

պահել Օսմանեան Կայսրութեան մնացեալ մասը, այսինքն՝ ոչ միայն թուրքերէն բնակուած, այլ հայերէ, քիւրտերէ, լազերէ եւայլ ժողովուրդներէ բնակուած մասերը: Իսկ ամէն անգամ որ կողմերէն մին կասկածէր, Անգարան կ'անդիտանար եղածը, յայտնելով որ Անգարան տեղեակ չէր, կամ՝ եղածը անհատական նախաձեռնութեան արդիւնք, կամ՝ անհատական կարծիք էր, եւ թէ Անգարան այդ տեսակէտը կամ համաձայնութիւնը չէր բաժնէր:

Այլեւայլ պարագաներ, ինչպէս Վենիզելոսի կառավարութեան անկումը, Ինէձոնիի մօտ թուրքերու արձանագրած յաջողութիւնը յոյներու վրայ, եւ սովետա-թրքական խորհրդաժողովի մը ի մօտոյ կայացման կարելիութիւնը, ի վերջոյ ստիպեցին Անգլիան միանալու Ֆրանսայի եւ Իտալիոյ, Սեւրի դաշնագիրը վերանայելու պնդումներուն: Ուստի Փարիզի մէջ 24-էն 29 Յունուարի 1921 թ.ին կայացած խորհրդաժողովին Լորտ Բըրգոնը Ֆրանսացի Պրիանլին եւ Իտալացի Սֆորցային կը տեղեկացնէր թէ Անգլիան համաձայն էր Փետրուարի ընթացքին Լոնտոնի մէջ խորհրդաժողով կայացնելու: Այս խորհրդաժողովին պիտի հրաւիրուէին նաեւ Յունաստանի եւ Թուրքիոյ զոյգ կառավարութիւններու ներկայացուցիչները(13):

Հայկական հարցը արդէն իսկ երկրորդական հարցի տեղ դըրուած էր: Անգլիոյ արտաքին գործոց նախարարութեան արխիւներուն մէջ գտնուող 18 Յունուարի 1921 թուակիր տեղեկագիր մը, ԱՄՆ-ի պետական քարտուղարութենէն Նորմըն Տէյլլիսի կողմէ գրուած՝ ուղղուած Փոլ Հայմանդի, որ նախագահն էր Ազգերու Լիկայի ընկերակցութեան, այդ մասին հետեւեալը կ'ըսէր. «Այնպէս կ'երեւի թէ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ նեղութեան անմիջական պատճառն է Սեւրի դաշնագիրը: Յիրաւի, այս դժուար հարց մըն էր, բայց դաշնագիրը դաշնակից ուժերուն կողմէ պատրաստուեցաւ եւ նեղութիւնը ծագած է այս դաշնագրին կարգ մը հատուածներու կողմէ չընդունուելու ձախողութենէն եւ դաշնակիցներու զայն չպարտադրելէն(14):

Կ. Պոլսոյ բրիտանական բարձր դոմինէր Հորաց Ռամպոլտը 29 Յունուարի 1921 թուակիր տեղեկագիր մը ղրկած է Լորտ Բըրգոնին, 21 Փետրուարի 1929 թ.ին Լոնտոնի մէջ կայանալիք խորհրդաժողովին առիթով օսմանեան արտաքին գործոց նախարար Սեֆա Պէյլին հետ ունեցած իր զրոյցին մասին, Սեւրի դաշնագրի վերանայման հարցով: Ինչ կը վերաբերի հայկական սահմանազօծին, օսմանեան արտաքին գործոց նախարարը կը յայտնէ թէ «պատրաստ է ընդունելու,

13. Նոյնը, էջ 169:

14. F. O. 371/6266.

որ ամէն մի շրջան, որը 55% կամ աւելի հայեր կը պարունակի, պէտք է յանձնուի Հայաստանին: Որպէսզի դիմագրաւի այն քննադատութիւնը, որ թուրքերը սեփական զործողութիւններով (այսինքն Գարդերով) կանխամտածուած կերպով պակասեցրել են հայ ազգաբնակչութիւնը տարրեր շրջաններում, նա պատրաստ է հիմք ընդունելու այդ շրջանների բնակչութեան նախապատերազմեան վիճակագրութիւնը», (այսինքն Օսմանեան վիճակագրութիւնը, որ հայերու ճշգրիտ թիւը չէր ներկայացներ): Գալով նաւահանգիստի հարցին, կը խոստանայ Սեւ ծովի որեւէ նաւահանգիստ տանող երկաթուղի մը չհզօրացնել, եւ դիւրութիւններ տալ հայկական առեւտուրին(15):

Անդանդի պետութիւններուն այս դիրքաւորման ի տես Սովետական Ռուսիոյ կառավարութիւնը ձեռնածալ չէր մնար, մանաւանդ Լոյս ճորճի յայտարարութիւններէն ետք, թէ՛ «Ռուս-թուրքական դաշինքը հակաբնական դաշինք է» իսկ «խզումը բոլշեւիկների եւ քեմալականների միջեւ ժամանակի հարց է»(16): 4 Փետրուարի 1921 թ.ին Սովետական Ռուսիոյ կառավարութիւնը յուշագիրով անդիւրական կառավարութեան կը գրէր. «Մեծն Բրիտանիան ձգտում է, թէեւ առանց յաջողութեան, խանդարել բարեկամական յարաբերութիւնները հաստատմանը թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ եւ թուրքական ազգային շարժումն ուղղել սովետական հանրապետութիւններին թըշնամական ուղու վրայ»(17):

14 Դեկտեմբերին Անգարայէն դէպի Մոսկուա ճամբայ ելած քեմալական պատուիրակութիւնը 15 Յունուարի 1921 թ.ին Կարս էր, սակայն Կարսէն չէր շարժած մինչեւ որ ՌՍՖՍՀ-ի Կարսի մէջ լիազօր ներկայացուցիչ Բուզու Մզիվանիի հետ քեմալականներու յարաբերութիւնները յաջողութեամբ պսակուած էին(18): Թուրքիոյ արտաքին զործոց նախարար Ահմէտ Մուխթարը 30 Յունուարի 1921 թ.ին յուշագիրով մը Չիչերինին կը տեղեկացնէր. «Շտապում եմ Ձեզ տեղեակ պահել, որ այդ նամակում (կ'ակնարկէ Մզիվանիի Մոսկուայի մօտ քեմալական դեսպան Ալի Ֆուատ Փաշայի ուղղած նամակին) բովանդակած յայտարարութիւնները, որով մեր կառավարութեանը կից Ձեր ներկայացուցիչը ՌՍՖՍՀ-ի անունից պաշտօնապէս հաստատում է որ թուրքիայի կողմից Հայաստանի տերիտորիալ դիվիզիոնների մասին խօսք լինել չի կարող, մեզ ամբողջովին բաւարա-

15. Հայաստանը. Փաստաթղթերում, էջ 692-693:

16. Էդ. Զոհրաբեան, Մոսկուայի Ռուս-թուրքական Կոնֆերանսի Նախօրէին, էջ 169:

17. Նոյնը:

18. Նոյնը, էջ 166:

րում են: ...Ոչ մի լուրջ արգելք այլևս չի կարող գժուարացնել մոսկովեան բանակցութիւնները: Այդպիսի պայմաններում մեր պատուիրակութիւնը հրահանգ է ստացել դուրս գալ Ղարսից եւ ամենայն արագութեամբ մեկնել Մոսկուա»(19): Հայրենի պատմադրող էդ. Չոհրաբեան արգարացիօրէն այս մասին կ'ըսէ. «Ասուած է պարզ եւ հասկնալի. Մոսկուայի ճանապարհին զլիաւոր գժուարութիւնը Հայաստանն էր»(20):

Թուրքերը ապահով էին որ Մոսկուայի մէջ հայերու հող պիտի չլիջէին, այսուհանդերձ, թուրքերը ունէին այլազան պահանջներ, ինչպէս՝ Իզմիրի հարցը, որոնք կ'ուզէին լուծել Անդանդի պետութեանց հետ: Արեւմտեան երկիրներու մէջ ալ թուրքերը քաջալերողներ եւ անոնց կողմնակիցներ կային: «Վիքթուար» թերթը իր 8 Փետրուարի 1921-ի թիւով կը գրէր. «Ասիայում ուսական բոլշեւիզմի լուսադոյն պատուարը ազգայնական թուրքիայի հետ համաձայնութեան գոյն է: ...Թուրքական բանակը կը կասեցնի բոլշեւիզմը ամբողջ Ասիայում եւ որպէս գրա սկիզբը կ'ազատագրի Բաքուի նաւթարեր հորերը»(21):

Գնդ. Սթօքս Թիֆլիսէն 4 Փետրուարի թուակիր հեռագրով կ'իմացնէր թէ Հայկական ՍՍՀ կառավարութիւնը 18 Յունուարի թուակիր յաշարով Անդարայէն պահանջած է Ալեքսանդրապոլի շրջանին եւ Կարսի նահանգին՝ թուրք զինուորներու կողմէ քանդումին դադրեցումը, եւ թրքական զորքերուն քաշուիլը: Գնդ. Սթօքս կ'աւելցնէր թէ թուրքեր մերժած են իրենց ուժերը ետ քաշել(22):

Արդէն 2 Փետրուարին, Գնդ. Սթօքս Լոնտոն փոխանցած էր Հայկական ՍՍՀ նախարարներու իրարու հետ 26 Դեկտեմբերի 1920 թ.ին սնեցած հեռաձայնային խօսակցութեան արձանագրութիւնը, ուր Լեւինին կը յայտնէր թէ, թէեւ Կարսի համար ուսերը չէին ուզեր եւ չէին կրնար կոտիլ, Հայաստանի պիտի օգնէին նիւթապէս, ապրանքներով եւ բաւարար չափով ուժերու կեդրոնացումով, Անդարան աւելի ճկուն դարձնելու համար(23):

Այս տեղեկութեան կից հետաքրքրական են Ֆորէյն Օֆիսի եզրակացութիւնները, որոնք կը կրեն Օդպորնի ստորագրութիւնը:

19. Նոյնը:

20. Նոյնը:

21. Թ. Գ. Սահակեան, Թուրք-Ֆրանսիական Յարաբերութիւնները եւ Կիրկիան, 1919-1921 թթ., Երեւան, 1970, էջ 94-95:

22. F. O. 371/6266/1713.

23. F. O. 371/6266.

«Այնպէս կը թուի թէ հայերը անյաջող կերպով կը փորձեն սուսական նեցուկ ապահովել (թուրք) ազգայնականներուն եւ վրացիներուն դէմ: Հայերը վերջնականորէն սուսերուն կողմն են եւ այսպէս պիտի թուի թէ Ռուսներէն զաշնագիրը փորձել իրենց տալ, պիտի ըլլայ սուսական ազդեցութիւնը Կ. Պոլսոյ աւելի մօտ բերել, ինչ որ ոչ մենք, ոչ ալ թուրքերը կ'ուզեն: Կը կարծեմ որ թերեւս մենք պէտք է կեզրոնանանք Կիլիկիոյ թրքահայերուն վրայ»(24):

Անգլիոյ արտաքին գործոց նախարարութեան արխիւներուն մէջ 8 Փետրուարի 1921 թուակիր ատենագրութիւն մը կայ, ուր կը տեղեկացուի թէ ձեմալ հեռագրած է Յունուարի 30-ին որ իթթիհաստական ղեկավար, նախկին պատերազմական նախարար Էնվեր, աֆղաններուն միջոցով կ'ուզէ անգլիացիներէն հասկնալ թէ, ճի՞շդ է որ Հայաստանը Քեմալի վերջնագիրը տուած է Կարսի վերադարձուիլը պահանջելով, եւ թէ տարակարծութիւն կա՞յ զաշնակիցներու եւ Ռուսիոյ միջեւ: Ասոր ներքեւ Օզպոյրն հետեւեալ արձանագրութիւնը ձգած է. «Ռուսերուն կողմէ Թուրքիոյ աւերուիլը կէտ մըն է զոր մենք կրնանք թուրքերու հետ մեր խօսակցութեան ընթացքին օգտագործել: Իրենց (թուրքերուն) ընտրութիւնը զաշնակիցներուն եւ Ռուսիոյ միջեւ է»(25):

Վերոյիշեալ արձանագրութենէն յստակ է թէ Օզպոյրն չէր հետաքրքրեր թէ Կարսը հայոց կը վերադարձուի թէ ոչ, սակայն իր երկրին շահերը կը պահանջէին որ թուրքերը զաշնակիցներուն կողմը ըլլային:

Ահա այսպիսի մտածումներով է որ անգլիացիք կը մօտենային Լոնտոնի խորհրդաժողովին:

Գնդ. Սթօքս Թիֆլիսէն՝ 16 Փետրուարի 1921 թուակիր հեռագրով Լոնտոն կը տեղեկացնէր թէ Հայաստանի Հանրապետութեան նախկին վարչապետ եւ Ալեքսանդրապոլի զաշնագիրը ստորագրողներէն Ալեքսանդր Սատիսեան իրեն հաղորդած է թէ «արդեօ՞ք կըրնայինք մենք (կակնարկէ անգլիական կառավարութեան) հայ-թրքական հասկացողութիւն մը կարգադրել, որ զիրենք ազատ պիտի ձգէր բոլշեւիկներու դէմ քայլեր առնելու»(26): Այդ քայլը կ'առնուէր երկու օրեր ետք, Երեւանի մէջ:

Օզպոյրն ու Նիքոլսըն, 17 Փետր.ի 1921 թ.ին, Անգլիոյ արտաքին գործոց նախարարութեան համար կը պատրաստէին հետեւեալ յուշագիրը. —

24. F. O. 371/6266/1712.

25. F. O. 371/6266/E1885/23/58.

26. F. O. 371/6266/E2077.

«Յարմար կը լինի սկսել սահմանափակելով բանավէճը հնարաւորին չափ նեղ շրջանակներում, սկզբից եւեթ բացատրելով պայմանադրի աշնպիսի բաժիններ, որոնք ձեւափոխութեան ենթակայ չեն...»

Եւնդիրներ, որոնց առնչութեամբ պայմանագրում կարելի կը լինէր փոփոխութիւններ մտցնել

...III. Հայաստան (բաժին VI)

Հրատարուել Ուելսոնի սահմաններից եւ փոխարինել հետեւեալ յօդուածներով.

ա) «Թուրքիան ճանաչում է Երեւանի հայկական հանրապետութեան անկախութիւնը նախապատերազմեան ուսական սահմաններում եւ հրատարուում է Կարսի, Ալեքսանդրապոլի եւ Արտասանի շրջանների նկատմամբ բոլոր պահանջներից ի ճանաչումն այն բանի, որ Հայաստանը հրատարուում է պահանջներից թուրքական վիլայէթների նկատմամբ»:

բ) «Թուրքիան ճանաչում է թուրքական տերիտորիայում հայերի ինքնավարութեան իրաւունքը եւ պարտաւորում է Ազգերի լիկային զիջելու սուլթանի իրաւունքները եւ իրաւունք Կիլիկիայում բաւարար տերիտորիայի վրայ ամփոփելու երկրում դանուող թուրքահայերին աջակցելու հայ փախստականներին վերադարձին դրսից: Այս տերիտորիան, որը կառավարուելու է հայերի կողմից Լիկայի գերակայութեան ներքոյ, տարածուելու է մօտաւորապէս Մերսին-Թարսուս-Ատանա-Օսմանիէ սահմանագծից մինչեւ Հաճըն-Չէլթուն-Մարաշ սահմանագիծը, այն շրջանակներում, որը որոշուելու է Ազգերի լիկայի նշանակուած յանձնաժողովի կողմից եւ ներառուելու է Թուրքիայի ու Հայաստանի ներկայացուցիչներին»:

գ) «Թուրքիան պարտաւորում է դիւրացնել Թուրքիայի միւս մասերից բոլոր հայերի տեղափոխումն այս տերիտորիան, ովքեր կը ցանկանան գնալ այնտեղ, ինչպէս նաեւ օգնել բոլոր թուրքերին, ովքեր կը կամենան հեռանալ այս տերիտորիայից եւ հաստատուել Թուրքիայի այլ վայրերում...» (27):

Այս յուշագրով կը թաղուէին Սեւրի դաշնագրով թուղթի վրայ հայոց խոստացուած հողամասերը, իսկ յառաջ կը քշուէր Օզպորնի տեսակէտը հայկական Կիլիկիա մը ստեղծելու, որ ուսական ազդեցութեան ենթակայ պիտի չըլլար:

21 Փետրուարի 1921 թ.ին կը սկսէր Լոնտոնի խորհրդաժողովը, որ կը տեւէր մինչեւ 14 Մարտի 1921 թ.: Խորհրդաժողովին կը

հարաւորուէին Յունաստանի եւ Թուրքիոյ ներկայացուցիչները: Թուրքիոյ կը թոյլատրուէր երկու պատուիրակութիւններով հանդէս գալ: Կ. Պոլսոյ ջանքերը՝ որ սուլթանական եւ քեմալական կառավարութիւնները միացեալ պատուիրակութեամբ ներկայանան, ձախողած էին: Սուլթանական ներկայացուցիչները, այսուհանդերձ, քեմալական պատուիրակութեան միախառնուեցան, եւ Կ. Պոլսոյ պատուիրակութեան պէտ Ռեշիտ Փաշան յայտարարեց թէ քեմալական արտաքին գործոց նախարար Պեքիր Սամի Պէյը լիազօրուած է արտայայտելու թրքական տեսակէտը: Թուրքիոյ միւս պատուիրակներն էին Կ. Պոլսոյ Հոսմի մօտ ներկայացուցիչ Օսման Փաշա եւ Մոնէիր Պէյ:

24 Փետրուարի 1921 թ.ին թրքական միացեալ պատուիրակութիւնը ներկայացուց իր պահանջները.

ա) Եւրոպական մասին մէջ Թուրքիան վերականգնել 1913 թ.ի սահմաններուն մէջ:

բ) Թուրքիոյ հարաւային սահմանները պէտք է անցնին այն դիժով, որ կը բաժնէ Թուրքիան արարական մեծամասնութեամբ բնակուած շրջաններէ: Այդ դիժէն հիւսիս վայրերը, որոնց շարքին Կիլիկիան, պէտք է պարպուին օտար զօրքերէ եւ վերադարձուին Թուրքիոյ:

գ) Թուրքիոյ արեւելեան սահմանը պէտք է անցնի Թուրք-պարսկական սահմանագծով եւ Թուրքիոյ ու Հայաստանի միջեւ կնքուած պայմանագրի համաձայն:

դ) Յունական զօրքերէն մաքրել Իզմիրի եւ Փոքր Ասիոյ յոյներէ գրաւուած հողերը եւ յանձնել Թուրքերուն:

ե) Նեղուցները ազատ հռչակելու պարագային երաշխաւորել Կ. Պոլսոյ անվտանգութիւնը եւ Թուրքիոյ գերիշխանութիւնը:

զ) Փոքրամասնութիւններու կրօնի եւ լեզուի պաշտպանութիւնը կ'ապահովուի:

է) Օսմանեան գերիշխանութեան յարգուելը:

ը) Զինուորական եւ ծովային ուժերու չափը որոշելու ատեն նկատի առնել երկրի տարածութիւնը, հարեւան երկիրներու քաղաքական վիճակը, որպէսզի ապահովուին ներքին կարգն ու կանոնը եւ սահմաններու անվտանգութիւնը:

թ) Թուրքիոյ էլեւմտական ու տնտեսական անկախութեան ճանաչումը capitulation-ի ջնջումով (28):

Թուրքեր իրենց պահանջներու երրորդ կէտով կը դրժէին Սեւրի գաշնագրի 89-րդ յօդուածը, եւ Հայաստանի հետ իրենց սահմանը կ'ուզէին որ ըլլայ ըստ Ալեքսանդրապոլի գաշնագրին:

Անգլիական «Թալմոզ» ազդեցիկ թերթը իր 25 Փետրուարի թիւով թրքական պահանջները կը նկատէր «անհեթեթ» :

Լոնտոնի խորհրդատուովի 26 Փետրուարի 1921 թ.ի նիստին հայերն ալ հրաւիրուեցան իրենց տեսակէտը ներկայացնելու : Հայկական պատուիրակութեան անդամներն էին Պողոս Նուպար Փաշա (Ազգ. պատուիրակութեան նախագահ), Աւետիս Ահարոնեան (Հայաստանի Հանրապետութեան պատուիրակ), Մալքոլմ եւ Ջօր. Բադրատունի (Լոնտոնի մօտ Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչ) : Այլ նիստին ներկայ էին Թուրքիոյ, Անգլիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ եւ Ճափոնի պատուիրակները(29) :

Լորտ Քըրզոնը ժողովի սկիզբին կը յայտարարէր թէ Սելրի պայմանագրի վերաբերեալ տեղի ունեցող բանակցութիւններու կազակցութեամբ կ'ուզէր իր տեսակէտները յայտնել : Ապա Լորտը կ'ուզէր զիտնալ թէ ով հայերու անունով պիտի խօսէր : Պողոս Նուպար Փաշա պատասխանելով կը յայտնէր թէ իւրաքանչիւրը իր պատուիրակութեան անունով կը խօսէր, բայց Պողոս Նուպար հանդէս պիտի գար իբր զոյգ պատուիրակութեանց նախագահ(30) :

Պողոս Նուպար յուզուած շեշտով հետեւեալ միտքերը կը պարզէր .

«Հայկական ծրագրի հիմքը Սելրի պայմանագիրն էր : Հայկական պատուիրակութիւնը պահանջում է պահպանել պայմանագիրն այնքանով, որքանով այն վերաբերում է Հայաստանին : Իրենք զբառնում են, որ այս պահանջը ներկայացնելու համար ունին կոնֆերանսի հաւանութիւնը, քանի որ կոնֆերանսն էր պայմանագրի նախագծողը, եւ քանի որ պետութիւնները Հայաստանի վերաբերեալ յօդուածները նախագծելիս, ոչ միայն ցանկանում էին վերջ տալ ծայրայեղութիւններին, որոնց զոհերն էին հայերը, այլեւ արմատախիլ անել սպառնալի բախումների սաղմերը : Երբեմն հարց է բարձրացում այն մասին, թէ արդեօք պէտք է թոյլ տալ, որ բոլշեւիկեան ռեժիմի հաստատումը Երեւանում ազդի ստեղծելու մի հայկական պետութիւն, ինչպէս ուրուագծուած է Սելրի պայմանագրում : Չպէտք է մոռնալ, որ պայմանագրով նախատեսուած անկախ Հայաստանը պէտք է ձեւաւորուէր Կովկասի հայկական հանրապետութեան եւ Թուրքիայի հայկական չորս վիլայէթների միաւորմամբ, որի սահմանագծումը յանձնուած է պրեզիդենտ Ուիլսոնին : Այն փաստը, որ Հայաստանին սովետական կարգեր են պարտադրուել, չպէտք է ետ պահել տէրութիւններին երկրի միւս մասերը, այն է՝ թուրքական

29. Հայաստանը Փաստաթղթերում, էջ 697 :

30. Նոյնը, էջ 698 :

չորս վերայէթները աղատագրելուց: Պէտք է յիշել անկասկած, որ հայկական հարցը ծագեց Թուրքիայում. Թուրքիայում հայկական ջարդերն էին, որոնք զրդեցին տէրութիւններին ջանալու հայերի ազատագրութեան համար: Պարտուած Թուրքիայի հետ էր եւ ոչ թէ նախկին դաշնակից Ռուսաստանի, որ տէրութիւններ կնքեցին Սեւրի պայմանագիրը: Ռուսական Հայաստանը մտցուեց հայկական պետութեան մէջ պարզապէս այն պատճառով, որ նա ղէպքերի բերումով անկախ հռչակուեց: Ճիշդ է, անշուշտ, որ չորս վերայէթներն օկուպացուած (գրաւուած) են քեմալական զօրքերի կողմից, բայց դաշնակիցները ճշուժ գործ զնելու տարբեր միջոցներ ունեն, որոնք կարող են օգտագործել էվազուացումն (զօրքերու պարսպումը) ապահովելու համար: Պարտագրուելիք սանկցիաների (պատիժներու) թւում ամենից կիրառելին այն անբխտութիւններն են (հոգամաբերու) օկուպացումը (գրաւումը) շարունակելն է, որոնք այժմ գտնուում են դաշնակիցների ոսղմական հակոցութեան ներքոյ, բայց որոնք, եթէ Թուրքիան իրագործի իր յանձնառութիւնները, վերջին հաշուով կարող են էվազուացուել (պարսպուիլ)»(31):

Գալով Կիլիկիոյ հարցին, Պօղոս Նուպար Փաշա յայտնեց թէ հայերը կ'ընդունին որ Կիլիկիոյ հողամասի մեծ մասը մնայ թրքական գերիշխանութեան ներքեւ: Իսկ նկատելով որ Կիլիկիոյ մէջ հայերը փոքրամասնութիւն չեն, այլ մեծամասնութիւն, հայերը կը դիմեն Ֆրանսայի որպէսզի ան չլքէ հայ ազգարնակչութիւնը, այլ Կիլիկիոյ համար ձեռք բերէ վարչական ինքնավարութեան վարչաձեւ, խառն (քրիստոնեայ եւ մահմետական) ժանտարմերիով: Նման վարչաձեւ մը անձեռնմխելի կը թողու թրքական գերիշխանութիւնը երկրի վրայ(32):

Ապա խօսք առնելով Աւետիս Ահարոնեան կը յայտնէր թէ ինք հանդէս կու գայ Սեւրի պայմանագրով ճանչցուած հայկական պետութեան անունով, որու կառավարութիւնը քանի մը օր առաջ, 18 փետր.ի 1921 թ.ին, վերականգնուած է, փոխարինելով սուլտանական վարչաձեւը(33):

Այս նախարանէն ետք Աւետիս Ահարոնեան կը շարունակէ.

«Քեմալականներն ներխուժումը Հայաստան իրականում ուղղուած էր Սեւրի պայմանագրի եւ դաշնակիցների դէմ: Դա ապա-

31. Նոյնը, էջ 698-699:

32. Նոյնը, էջ 700:

33. Նոյնը:

ցուցում է պարտութիւնից յետոյ Հայաստանին պարտադրուած առաջին իսկ պայմաններով, որպէսզի Հայաստանի կառավարութիւնը հրաժարուի Սեւրի պայմանագրից: Կային մարդիկ, ովքեր ասում էին, թէ քանի որ Ռուսահայաստանը բոլշեւիկացուել է, այլեւս կարիք չկայ հայկական պետութիւն ստեղծել: Նրանք մոռանում են, սակայն, որ Թուրքիայի ոչ բոլոր հայերն են բնաջնջուել: Նրանցից մօտ 300,000-ը ապաստան են գտել Կովկասում եւ սպասում են այն պահին, երբ կը կարողանան վերադառնալ իրենց տները: Պէտք է յիշել, սակայն, որ Վանի, Պիթլիսի եւ Էրզրումի երեք վիլայէթներում, համաձայն վերջին տեղեկութիւնների, միայն 96,000 մահմետականներ են մնում:

«Ինք ընդունում է, որ Երեւանի կառավարութիւնը բանակցութիւնների մէջ է մտել քեմալականների հետ, բայց ինքն անձամբ Կարսի անկումից յետոյ եւ նախքան (Ալեքսանդրապոլի) պայմանագրի կնքումը նամակ է ստացել, որով իր կառավարութիւնը յայտնում էր իրեն, որ իրենք չըջապատուած են եւ հարկադրուած կը լինեն ընդունել իրենց թշնամիների պայմանները, բայց եւրոպայում իրենց ներկայացուցչին հրահանգում են չճանաչել այդ անխուսափելի պայմանագիրը եւ մերժել բոլոր պարտաւորութիւնների օրինականութիւնը... Թուրքերն այժմ աւերում են իրենց ներխուժած շրջանները եւ սխտեմատիկ կերպով ջանում են հայկական տարրը փոխարինել մահմետականով: Հայկական պատուիրակութիւնը կ'ողջունի դաշնակիցների յանձնաժողովի ուղարկումն այդ վայրերը՝ ստուգելու համար իրերի ներկայ կացութիւնը: Թուրք ազդայնականները, ներխուժելով Հայաստան, ճգնում են ցոյց տալ, որ անհնարին է Սեւրի պայմանագրի իրադրոծումը, իսկ նրանց իղձն է հայկական տերիտորիայի վրայով ձեռք մեկնել Թուրանական տարրերին:

Աւետիս Ահարոնեան ապա կը յայտարարէ. «Սեւրի պայմանագիրը Հայաստանը տուել էր հայերին իբրեւ փոխհատուցում այն սառապանքների, որ կրել էին հինգդարեայ հալածանքների, 30 տարուայ պայքարի եւ վեց տարուայ պատերազմի ու կոտորածների ընթացքում: Սեւրի պայմանագրի 218-րդ յօդուածն ապահովում է օսմանեան տերիտորիայում այն դերեզմանատների պաշտպանութիւնը, որտեղ դաշնակից զինուորներն են թաղուած. հայերի համար Թուրքահայաստանն ինքը մի լայնածաւալ դերեզմանոց է, մի սրբազան հողակտոր, որը պահանջելուց նրանք երբեք չեն դադարի: Աւելին, թող դաշնակիցները չմոռանան, որ եթէ 1,500,000 հայեր կոտորուել են, ապա դեռեւս մնում են 2,000,000 հայեր Ռուսահայաստանում եւ 1,000,000 էլ սփռուած են արտասահմանում: Այդ վերապրող հա-

յերը բնաւ չեն հանդարտուի, մինչեւ որ Թուրքահայաստանի այդ սրբազան հողը չվերադարձուի նրանց»(34) :

Ապա Լորտ Բըրդոն կը յայտնէր թէ Սեւրի գաշնազրի իրա-  
դործման ճամբուն վրայ լուրջ դժուարութիւններ կային : Առաջին ,  
բողջելիզմը Ռուսահայաստանի մէջ, երկրորդ՝ Մուսթաֆա Բեմալի  
ուժերուն կողմէ հայկական հողամասի մեծագոյն մասի զբաւումը ,  
եւ երրորդ՝ մեծ տէրութիւններու անզօր ըլլալը մեծ ուժեր ուզար-  
կելու Հայաստանի օգնութեան համար : Ուստի՝ Լորտը կ'ուզէ հայ-  
կական պատուիրակութեան իմանալ Հայաստանի «էական» հողային  
սահմանները, նախապէս իրենց յայտնելով որ ԱՄՆ-ի նախագահ  
Ռեյլըն արդէն զծած է հայկական սահմանազիծը ներառելով Տրա-  
պիզոնը(35) :

Պօղոս Նուպար Փաշա իր պատասխանին մէջ կը յայտնէր թէ  
տեղեակ չէր նախագահ Ռեյլընի որոշումին (որ 22 Նոյեմբերի 1920  
թ-ին պատրաստ էր եւ Ուաշինկթընի մէջ հրատարակուած էր 2 Յուն-  
ուարի 1921 թ-ին) , սակայն հայերը պատրաստ էին զայն ընդունե-  
լու եւ թէ հայերը Տրապիզոնը չեն պահանջեր(36) :

Լորտ Բըրդոն ապա Աւետիս Ահարոնեանէն կ'ուզէր տեղեկանալ  
Ալեքսանդրապոլի գաշնազրի մասին :

Աւետիս Ահարոնեան պատասխանելով կ'ըսէր թէ պայմանազի-  
բը պարտադրուած է ուժով եւ կտրականապէս կը մերժուի հայերու  
կողմէն, իսկ գալով ճշգրիտ սահմաններուն, ինք ճիշդ չի գիտեր,  
բայց սահմանը մօտաւորապէս կ'անցնի Արփաշայ դետով մինչեւ ա-  
նոր Արաքսի մէջ թափուելը(37) :

Լորտ Բըրդոն Փրանսական պատուիրակութեան կ'ուզէր իմա-  
նալ թէ Կիլիկիոյ մէջ հայերու պաշտպանութեան վերաբերեալ Պօղոս  
Նուպարի տեսակէտներուն շուրջ Փրանսայի տեսակէտը ի՞նչ էր :  
Փրանսայի պատուիրակը կը յայտնէ թէ Կիլիկիոյ համար յատուկ վար-  
չածեւ հնարաւոր չէ պահանջել, իսկ իրենց երկիրը հայկական փոք-  
րամասնութիւնը ապահովելու երաշխիք կու տայ :

Պօղոս Նուպար Փաշա կ'առարկէ թէ հայերը Կիլիկիոյ մէջ  
փոքրամասնութիւն չեն : Կիլիկիոյ Ատանայի վիլայէթի ազգաբնակ-  
չութիւնը 215,000 քրիստոնեաներէ եւ 185,000 մահմետականներէ  
բաղկացած է : Փրանսայի պատուիրակներէն Կամբերերը կը պնդէ թէ

34. Նոյնը, էջ 700-702 :

35. Նոյնը, էջ 702 :

36. Նոյնը, էջ 703 :

37. Նոյնը :

1914 թ.-ին Ատանայի վիլայեթին բնակչութեան 314,000-ը մասմե-տականներ էին եւ միայն 55,000-ը հայ քրիստոնեայ, եւ որոշ թիւով յոյն աղղարնակչութիւն: Երբ Պօղոս Նուպար կ'ուզէ այս կէտին պատասխանել Լորա Քըրզոն չի թոյլատրեր, յայտնելով թէ նիստը պէտք է շարունակէ քննարկել իր գլխաւոր ծրագիրը(38):

Ֆորէյն Օֆիսէն Օղպօրն՝ բրիտանական արտաքին գործոց նախարարութեան 28 Փետրուարի 1921 թուակիր ատենադրութեան մէջ, հայկական պատուիրակութեան խորհրդաժողովին ներկայա-նալէն երկու օր ետք միայն, կը գրէ. «Պր. Ահարոնեան եւ Պօղոս Նուպար Փաշա իրարու հետ անհամաձայն էին: Ըստ Ահարոնեանի հայկական աղղային օճախը կրնար հիմնուիլ միայն թրքական վիլ-լայեթներու մէջ եւ ոչ Կիլիկիոյ մէջ. Երեւանի Հանրապետութեան հայերը բոլշեւիկեան լուծը, որ իրենց զգացումներուն խորշէլի է, պիտի տապալեն, եւ յետոյ կրնան միանալ Թրքահայաստանին հետ: (Սեւրի) դաշնագիրը պէտք է պահուի եւ (Լոնտոնի) խորհրդաժո-ղովը պէտք է ստեղծէ Հայաստան մը թրքական վիլլայեթներուն մէջ: Ես ցոյց տուի դժուարութիւնը հաղարսուր մ'զոններով հոգա-մասի մը եւ քանի մը հազար անօգնական բնակչութեամբ ինքնա-բաւ եւ անկախ պետութիւն մը ստեղծելուն, առանց Ամենակալին ուղղակի միջամտութեան եւ առանց (նիւթական) աղբիւրներու եւ ղեկավարներու: Ան կրկին անդրադարձաւ Կովկասեան համադաշ-նակցութեան մը, որպէս հակա-ուսասկան պատնէշ... Ան բուական անտարբեր կը թուէր Կիլիկիոյ նկատմամբ»(39):

4 Մարտի 1921 թ.-ին Լոնտոնի խորհրդաժողովը կը լսէր թուր-քերու պատասխանը: Թուրքերը լաւատեղեակ եւրոպական դաշնա-կից պետութեանց ներքին տրամադրութիւններուն, կը պնդէին իրենց սկզբնական պահանջներուն վրայ: Լորա Քըրզոն իր պատասխանին մէջ կրկին կը շեշտէր թէ դաշնակիցները տրամադրութիւն չունէին հրաժարելու Հայաստանի նկատմամբ իրենց որոշումէն(40):

Լսելէ ետք բոլոր շահազրկուող կողմերը, Լոնտոնի խորհրդ-աժողովը, 12 Մարտի 1920 թ.-ին, յոյներուն և թուրքերուն առա-ջարկի ձեւով կը յայտնէ իր վերջնական որոշումները, որոնք առար կէտերէ կը բաղկանային: Այս առաջարկները, որոնք ընդհան-րապէս թուրքերուն կարեւոր զիջումներ կը պարունակէին, պէտք էր

38. Նոյնը, էջ 704:

39. F. O. 371/6266/E2669.

40. Ալ. Խատիսեան, Հայաստանի Հանրապետութեան Ծագումն ու Չարգա-ցումը, Բ. տպագրութիւն, Պէյրութ, 1968, էջ 340:

ամբողջապէս ընդունիլ կամ մերժել(41) : Ստորեւ տրուած 9-րդ կէտը կը վերաբերի Հայաստանին :

«9. Հայաստան. — Ինչ կը վերաբերի Հայաստանին, ներկայ պարտուորութիւնները կրնան յարմարցուիլ, պայմանով, որ Թուրքիան ճանչնայ թրքահայերու իրաւունքները Ազգային Օճախի մը համար Ատիական Թուրքիոյ արեւելեան սահմաններուն մէջ, եւ համաձայնի ընդունիլ այս յանձնաժողովի որոշումը, որ կը նշանակուի Ազգերու Լիկայի Խորհուրդէն, նպատակ ունենալով աեղւոյն վրայ ուսումնասիրել այն հոգաժամարու խնդիրը, որոնք արգարացի պիտի ըլլար այդ նպատակի համար փոխանցել Հայաստանին»(42) :

Թուրքերը եւ յոյները այս որոշումները իրենց պատկան խորհրդարաններուն պիտի ներկայացնէին առ ի քննութիւն : Իսկ զաւրով հայերուն, անոնք յուզումի մատնուած էին Սեւրի պայմանագրի հայոց աննպաստ կերպով վերանայման առաջարկներուն պատճառով :

Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութիւնը ղէմ էր օճախի գաղափարին, իսկ Ազգային պատուիրակութիւնը կը հաշտուէր օճախի գաղափարին հետ, այլ ելք չտեսնելով(43) :

Լոնտոնի խորհրդաժողովը շուարտած, Պեքիր Սամիի ճիգերը յաջողութեամբ կը պահուէին դաշնակից պետութիւններուն հետ անջատ համաձայնութիւններ կնքելու : 9 Մարտի 1921 թ.ին Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Արիսթիտ Պրիան եւ քեմալական արտաքին գործոց նախարար Պեքիր Սամի Պէյ կը կնքէին անջատ համաձայնութիւն մը, ըստ որուն, Ֆրանսա կը կրճատէր իր ազդեցութեան գօտին Սուրիոյ մէջ ի նպաստ Թուրքիոյ, եւ ատոր փոխարէն կը ստանար շարք մը թոյլտուութիւններ եւ այլազան մենաշնորհներ Կիլիկիոյ, Տրարպեքիւրի եւ Սերաստիոյ մէջ(44) : Հայկական արգար իրաւունքները բնականաբար կը զոհուէին, որպէսզի այս համաձայնութիւնը իրականանար :

12 Մարտի 1921 թ.ին Պեքիր Սամի անջատ համաձայնութիւն մը կը կնքէր Իտալիոյ արտաքին գործոց նախարար Կոմս Սֆորցայի հետ : Արդէն 23 Յունուարի 1921 թ.ին (երբ Կարսի մէջ քեմալականներ կը բանակցէին սովետ ներկայացուցիչ Մըլիփանիի հետ) քեմալական Ալի Ֆուատ Փաշան իտալացի Պոտրերոյին կը հասկցնէր թէ ինքը կը դերազատէր համաձայնութեան զալ ոչ թէ Մոսկուայի, այլ

41. Նոյնը, էջ 341 :

42. Նոյնը :

43. Նոյնը, էջ 342 :

44. Բ. Գ. Սահակեան, Նշ. աշխ., էջ 100-102 :

Անդանդի պետութիւններուն հետ, որովհետեւ Իտալիան կը պաշտպանէ Թուրքիոյ պահանջները Հայաստանի եւ Վրաստանի հարցերուն մէջ: Ըստ Մարտի համաձայնագրին, Իտալիան կը պարտաւորուէր վերջնական հաշտութեան պայմանագրի պատրաստութեան միջոցին պաշտպանել Թուրքիոյ բոլոր պահանջները(45):

Պեքիր Սամի փորձեց նաև Անգլիոյ հետ որոշ համաձայնութեան դալ տնտեսական կարգ մը գիշումներ խոստանալով եւ Սովետական Ռուսիոյ դէմ իբր ուժ ներկայանալով: Լոյս ձորձի հետ անդրբուլղարացի բանակցութիւններու ընթացքին քեմալական արտաքին գործաւարը առաջարկեց «բոլշեւիզմի դէմ պայքարելու նպատակով Թուրքիայի գլխաւորութեամբ միաւորել Կովկասի ժողովուրդներին մի Ֆեդերալ (զաշնակցային) բուֆերային (համեմատաբար ոչ մեծ եւ տնտեսական, քաղաքական եւ ռազմական տեսակէտէն թոյլ պետութիւն, որ ինկած է երկու խոշոր պետութիւններու միջեւ եւ կ'օգտագործուի որպէս բուֆեր (միջանկեալ օղակ) անոնց յարաբերութեանց մէջ) պետութեան մէջ եւ անհրաժեշտութեան դէպքում այն ուղղել Սովետական Ռուսաստանի դէմ»(46): Այս առաջարկը մերժուեց էր Լոյս ձորձի կողմէ ոչ իր հակա-խորհրդային բնոյթին համար, այլ քանի որ այն կ'ենթադրէր Անատոլուէն յունական զօրքերու պարպումը: Իսկ Լոյս ձորձ կը յուսար որ յունական զօրքերը յաջողութիւն կ'արձանագրեն եւ կ'իրադրեն Սեւրի դաշնագիրը: Հետագայի ընթացքին է գիտել տալ որ Պեքիր Սամին Լոնտոնէն Անգլարա իր դարձի ճամբուն՝ Փարիզի մէջ, 23 Մարտի 1921 թ.ին հանդիպում կ'ունենայ Հայաստանի Հանրապետութեան նախկին վարչապետ Ալեքսանդր Սատիսեանի հետ Հիւսիսային Կովկասի գործիչի մը տան մէջ: Ալ. Սատիսեան այս մասին կը գրէ թէ Պեքիր Սամի շեշտեց «թէ միայն կովկասեան հանրապետութիւններու սերտ միութիւնը կրնար ապահովել այդ հանրապետութիւններու եւ մասնաւորապէս Հայաստանի յաջողութիւնը: Բեքիր Սամի Բէյ ըսաւ նաև, թէ միայն Հայաստանին Թուրքիան պիտի չզիջի երբեք ո՛չ Կարսը, ո՛չ Սուրմալուն, ուր մնաց թրքական վիլայէթները, որովհետեւ այդ պիտի նշանակէր զիջիլ Ռուսաստանին, որու կազմի մէջ այժմ կը մտնէ Հայաստանը: «Բայց, - աւելցուց ան, - եթէ ստեղծուի կովկասեան հանրապետութիւններու զաշնակցութիւն մը(47), որ կարենայ ուժեղ

45. Ալ. Խատիսեան, Նշ. աշխ., էջ 342-343:

46. Halide Edib, *The Turkish Ordeal*, London, 1928, p. 255.

47. Այդպիսի մտադրութեամբ, Անդրկովկասեան իշխանութեան հետապնդող վարչապետներուն ներկայացուցիչները 10 Յունիսի 1921 թ.ին կը ստորագրեն «յայտարարութիւն» մը, ըստ որուն, Հայաստանի, Վրաստանի, Արարկիստանի

մարմին դառնալ, Թուրքիան կրնայ անոր ոյժ տալ, թէկուզ աննչան հողային գիջումներով» (48) :

Թուրքերը թէև դո՛հ էին որ Սեւրի պայմանագրին Հայաստանի վերաբերող տրամադրութիւնները լքուած էին Անդանդի պետութեանց կողմէ, բայց դո՛հ էին հայկական ազգային օճախի գաղտարէն, որ կ'ենթադրէր իրենց զբաւած հողամասերէն որոշ մասի մը հայոց փոխանցումը: Քեմալական Թուրքիան ամէն գնով կ'ուզէր Ալեքսանդրապոլի դաշնագրով դժուած սահմանները ունենալ արեւելքի մէջ: Էդ. Չոհրաբեան լաւ կը բանաձեւէ երբ այս մասին անդրադառնալով կը գրէ. «Թուրքիան ինչ է՛քր գտել Լոնդոնում, սկըսեց որսնել Մոսկուայում»: Քեմալական Թուրքիան 7 Մարտին յատուկ յուշագրով սովեա արտաքին գործալար Չիչերինի կը փոխանցէր Լոնտոնի խորհրդատուի առաջարկութիւնները այն յոյսով որ աւելի լաւ պայմաններ պիտի ստանար Ռուսիայէն:

Հայկական ՍՍՀ-ի արտաքին գործերու նախարար Ա. Բեկզազեանը, հակառակ անոր որ սովետական իշխանութիւնը առժամաբար տապալած էր (18 Փետրուար - 2 Ապրիլ 1921 թ.), 8 Մարտի 1921 թ.-ին քեմալական արտաքին գործոց նախարար Ահմէտ Մուխթարին յուշագիր մը կը յղէր թէ իր 19 Դեկտ. 1920 թ.-ի յուշագիրը ստացուած էր 31 Դեկտեմբերին: Ապա կը յայտնէր թէ «յուզմունքով երիտասարդ Հայաստանը հետեւում է Անատոլիայում ժողովրդական յեղափոխութեան ծաւալման պրոցեսին» եւ թէ «Թուրքիայի ազգային-ազատագրական շարժումը ի դէմս նրա կրողի՝ ճնշուած աշխատաւոր բնակչութեան, որն ապստամբել է Անտանտի իմպերիալիզմի դէմ, մենք համարում ենք մեզ ողբելից եւ նրան կ'օգնենք ու կ'օժանդակենք հակառակ ամէն ինչի», ապա կը յայտնէր իր բուն ըսելիքը, թէ՛ «Հայաստանի Սոցիալիստական Սովետական Հանրապետութեան կառավարութիւնը չի կարող չարաայայտել իր տարակուսանքն այն բանի առթիւ, որ մեզ ընդհանուր բաժին ընկած պատասխանատու պատմական խնդրում՝ անցեալ վէճերը վերջնականապէս կարգաւորելու եւ մեր երկու աշխատաւոր ժողովուրդների միջեւ ամուր եւ անխախտ բարեկամութիւն հաստատելու գործում, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարութիւնը հնարաւոր է համարում եղնել Ալեքսանդրապոլի պայմանագրից եւ յենուել նրա վրայ, որը, մէկ կողմից, բնորոշ էր սոսկ Թուրքիայի պատերազմական յաջողութիւններից

եւ հիւս. Կովկասի նախկին կառավարութեանց ներկայացուցիչները անբաժնէտ կը գտնէին «Իրարու հետ սերտ միութիւն՝ քէ տնտեսական եւ քէ քաղաքական գետնի վրայ»: (Տես՝ Ալ. Խատիսեան, Նշ. աշխ., էջ 345):

48. Ալ. Խատիսեան, Նշ. աշխ., էջ 344:

առաջացած սպեցիֆիկ (մասնաշատուկ) պայմանների և որոշակի մո-  
մենտի (վայրկեանի) համար եւ, միւս կողմից, պայմանաւորուած  
էր գաշնակցական նայրինալիզմի հոգեվարքով»։ Յուշագիրը ապա կը  
յայտնէր թէ թրքական ուժերու կողմէ գրաւուած շրջաններու ապա-  
զայ գոյալիճակը ճշգրտու համար կատարուելիք հանրաքուէն համո-  
զիչ չէ, քանի որ նախ՝ ռազմական գրաւման պայմաններու տակ տե-  
ղի կ'ունենայ եւ ապա՝ «Հայաստանին եւ Թուրքիային կից շրջան-  
ներում համաշխարհային պատերազմի եւ հայկական բնակչութեան  
դէմ սուլթանական կառավարութեան գործադրած վերջին տարիներու  
հրէշաւոր հալածանքների հետեւանքով ստեղծուած պայմաննե-  
րում հանրաքուէն մեծ չափով կորցնում է ինչպէս իր նորմալ-քա-  
ղաքական նշանակութիւնը, նոյնպէս եւ իր գործադրման պրակտիկ  
(գործնական) հնարաւորութիւնը»։ Յուշագիրը կ'եզրափակուէր այն  
համոզումով թէ երկու կառավարութիւններուն միջեւ գոյութիւն ու-  
նեցող բոլոր վիճելի հարցերը իրենց սպառիչ լուծումը կը ստանան  
մօտ օրէն Մոսկուայի մէջ բացուող խորհրդաժողովին մէջ, եւ այն  
յոյսով որ Թուրքիան իր զօրքերը կը հեռացնէր Ալեքսանդրապոլի  
գաւառէն եւ շրջակայքէն(49) :

Միւս կողմէ Մոսկուա լուր կը հասնէր Պեքիր Սամիի կնքած  
թուրք եւ ֆրանսական համաձայնութեան մասին։ Զիչերին Մոսկուա-  
յի մօտ քեմալական դեսպան Ալի Ֆուատին 12 Մարտի 1921 թ-ին  
յուշագրով մը կը տեղեկացնէր թէ ֆրանսական կառավարութիւնը  
Մովետական Ռուսիոյ «ամենամանհատ ու ամենահետեւողական թըշ-  
նամին է, որը երբեք չի տատանուել ու չի նահանջել» եւ ապա հարց  
կու տար թէ Պեքիր Սամին Կ. Պոլիսը թէ՛ Անդարան կը ներկայաց-  
նէր(50) :

Թրքական կեղծաւորութեամբ եւ վարպետութեամբ, ու հետա-  
մուտ իրենց երկղիմի քաղաքականութեան, դեսպան Ալի Ֆուատ Ռու-  
սիոյ արտաքին գործոց նախարար Զիչերինի կը պատասխանէր յա-  
ջորդ օրն իսկ, 13 Մարտի 1921 թ-ին, նամակով մը, ուր ի միջի այ-  
լոց կը գրէր. «Ինձ թոյլ եմ տալիս Պրն. Կոմիսարի ուշադրութիւնը  
հրաւիրել այն բանի վրայ, որ մենք այստեղ, Մոսկուայում հաւաք-  
ուելի ենք կոնֆերանսի եւ, որ մեր ընդհանուր թշնամիները՝ արեւ-  
մրտեան կապիտալիստները կոնֆերանսի աշխատանքի մէջ չփոթու-  
թիւն մտցնելու կամ թէ այն ի սպառ վիժեցնելու համար բաց չեն  
թողնում ոչ մի առիթ։ . . Արդեօք պէտք չէ ենթադրել, որ մոսկով-  
եան կոնֆերանսի վրայ կործանարար ազդեցութիւն գործելու նպա-

49. Հայաստանը Փաստաթղթերում, էջ 493-496:

50. Նոյնը, էջ 497-498:

տակ ունի այն իրողութիւնը որ իբրև թէ Բեքիր Սամիի արած յայտարարութիւնները հրապարակուած են այն երկրի մամուլի էջերում, որը, Ձեր կարծիքով, հանդիսանում է Ռուսաստանի երզուեալ թըշնամին»... (51) :

Մոսկուայի մէջ կը բացուէր թուրք եւ սուս խորհրդաժողովը (52) : Թէև Սովետական Ռուսիոյ կառավարութիւնը մասնակցութեան հրաւէր զրկած էր Ազրպէյճանական եւ Հայկական Սովետական կառավարութիւններուն, Սովետական Հայաստանի կառավարութիւնը չկրցաւ մասնակցել խորհրդաժողովին : Խորհրդաժողովի 12 Մարտի 1921 թ-ի արձանագրութիւններուն համաձայն քեմալական թուրք պատուիրակները մերժած են հայ պատուիրակներուն հետ կլոր սեղանի շուրջ բանակցել «լիազօրութիւններու բացակայութիւն» պատրուակելով, խախտելով իրենց տուած համաձայնութիւնը (53) : Բացասական զեր կատարած է նաեւ Երեւանի նոր իշխանութեան «Հայրենիքի փրկութեան կոմիտէ»ի նախագահ Սիմոն Վրացեանի 10 Մարտի 1921 թ-ի հեռագիրը Մոսկուայի խորհրդաժողովին, որ կը յայտնէ թէ Ա. Բեկրատեան իրաւունք չունէր Հայաստանի անունով խօսելու (54) : Այս պարագան պատճառ կ'ըլլայ որ Սովետական Ռուսիոյ կառավարութիւնը չկարենայ ապահովել Հայկական ՍՍՀ-ի պատուիրակութեան մասնակցութիւնը : Խորքին մէջ թուրքերը ամէն զնով կ'ուզէին խորհրդաժողովը վերածել զուտ սուս-թրքական խորհրդաժողովի : Թուրքերը կ'ուզէին անջատ բանակցութիւններ վարել Անդրկովկասի սովետական իւրաքանչիւր հանրապետութեան հետ եւ իրենց պայմանները պարտադրել : Երբ Մոսկուայի խորհրդաժողովին լիազօրազրութիւններու բացակայութիւն կը պատրուակէին, իրենք ի մտի ունէին որեւէ Հայկական կառավարութիւն (սովետական կամ դաշնակցական) : Թուրքերը կը յուսային անջատ բանակցութեան եւ համաձայնագրի կնքումին՝ Ալեք-

51. Նոյնը, էջ 498 :

52. Սովետական Ռուսիոյ պատուիրակներն էին արտաքին գործոց նախարար Գեորգի Չիչերին, եւ Համառուսաստանեան կեդրոնական Գործադիր կոմիտէի անդամ Զեյլալ-Էդիմ կորկմաժով, իսկ քեմալական թուրքիան կը ներկայացնէին ժողովրդական սնտեսութեան նախարար Էուսուֆ Քեմալ Պէյ, լուսաւորութեան նախարար Գեկտար Ռիզա Նուր Պէյ, եւ Մոսկուայի մօտ դեսպան Ալի Ֆուատ Փաշա :

53. Է. Զոհրաբեան, Հայ-թուրքական Յարաբերութիւնների Պատմութիւնից, էջ 10 :

54. Գեքամ Ահարոնեան, Մեծ Երազի Ճամբուն Վրայ, Պէյրուք, 1964, էջ 162 :

սանդրապոլի դաշնագիրը վերջնականորէն պարտադրել Հայաստանին (ինչ վարչաձեւ ալ ունենար ան) :

Մոսկուայի խորհրդատուներն ելքը արդէն իսկ յայտնի էր ժողովի սկզբնաւորութենէն առաջ : Թուրքերը Մոսկուա ճամբայ ելած չէին առանց նախօրօք ապահովելու իրենց բարենպաստ ելքը, ինչ որ ապահոված էին Կարսի մէջ Մզիվանիի հետ բանակցելով : Եթէ որեւէ կասկած կար, այդ ալ փարատեցաւ, երբ Սովետական Ռուսիոյ ազգային զործերու ժողովրդական կոմիսարիայի Մոսկուայի մէջ հրատարակուող օրկանը՝ «Ժիզն Նացիոնալիստէյ», Ա. Սկաչկօ-ի ստորագրութեամբ՝ 4 Մարտի 1921 թ.ին կը գրէր. «Յանուն արեւելքի յեղափոխութեան զարգացման» աշխատաւոր Ռուսիան եւ Սովետական Հայաստանը «կարող են յայտնի զիջումներ անել Թուրքիային», այսուհանդերձ Թուրքիան պէտք է հայկական սովետական իշխանութեան եւ անոր նախորդող հայկական իշխանութեան մէջ տարբերութիւն մը դնէր եւ թէ «անմտութիւն էր Սովետական Հայաստանի նկատմամբ ցուցաբերել թշնամական վերաբերմունք»(55) :

Գլխաւորաբար սովետներու թիւը համոզումը, թէ՛ Թուրքիոյ հետ վէճերու լուծումով «արեւելքում յեղափոխութեան համար կը բացուի աշխարհը ճնշող իմպերիալիզմի դէմ անդադար յաղթանակների փայլուն դարաշրջան», միւս կողմէ՛ Հայաստանի մէջ այդ օրերուն տիրապետող հակա-սովետ կառավարութեան դոյուլթիւնը եւ ՌՍՖՍՀ-ի ընդհանուր քաղաքական-զինուորական աննպաստ կացութիւնը պատճառ եղան որ Սովետական Ռուսիա եւ քեմալական Թուրքիա յաջողութեամբ բանակցութիւններ վարեն եւ ստորագրեն Մոսկուայի 16 Մարտի 1921 թ.ի ուս եւ թուրք պայմանագիրը : Հարցին նմանօրինակ ելքի մը հասնելուն մէջ հիմնական դեր կը խաղար նաեւ Թուրքիան Անդանդի պետութիւններէն հեռացնելու Սով. Ռուսաստանի ցանկութիւնը :

Այսպէս, առանց հայկական մասնակցութեան կնքուած ուս եւ թուրք պայմանագիրը իր յօդուած Ա.ի պայմաններով Ալեքսանդրապոլի դաշնագիրը ինքնաբերաբար չեղեալ կը համարէր, Կարսի նահանգի եւ Սուրմալուի (ուր մինչեւ երեք տարի հանրաբուէ պիտի կատարուէր ըստ Ալեքսանդրապոլի դաշնագրին) վիճելի հողամասերը ու Արտասանը տը ժիւրէ կ'ըլլային Թուրքիոյ, Նախիջևեանը Ազըրպէյճանի հովանաւորութեան տակ ինքնավար հողամաս կը յայտարարուէր եւ ԺԵ. յօդուածով՝ Սովետական Ռուսիան կը պատրաստուէր անհրաժեշտ քայլերու ձեռնարկել՝ Անդրկովկասեան հանրա-

պետութիւններուն վերաբերեալ պայմանագրի յօդուածները վերջին-ներուն կողմէ ճանչցնելու համար :

Սովետական Ռուսիոյ ղեկավարներն ալ կ'ուզէին քեմալականները իրենց կողմը շահիլ եւ չթոյլատրել որ անոնք Անդանդի պետութեանց կողմը անցնին : Հոս եւս զօհը Հայաստանն էր : Պաքուի Սովետի 11 Ապրիլի 1921 թ.ի նիստին Գ. Կ. Օրջոնիկիձէն, այն հարցին թէ ի՞նչպէս կը բացատրուէր Կարսի, Արտահանի եւ Արզուիի դիջումը թուրքերուն, հետեւեալ կերպով կ'արտայայտուէր. «...Այստեղ մենք ստիպուած էինք հաշուի նստել կատարուած փաստի հետ : Դաշնակներն արդէն համապատասխան պայմանագրեր էին կնքել, թուրքերը գրաւել էին իրենց յանձնուած մարզերը եւ Մոսկուայում մեզ հետ բանակցութիւններ վարելու ժամանակ կտրականապէս հրաժարում էին վերադարձնել զրանք մեզ : Այդ բանի համար մենք թուրքերի հետ բարտուել չէինք ցանկանում : Դա ձեռնառու կը լինէր միայն Անգլիային եւ Ֆրանսային(56) :

Թուրքերը դատած էին այն ինչ որ կը փնտռէին : Ուստի երբ քեմալական արտաքին գործոց նախարար Պեքիր Սամիի Լոյս ձորճի հետ ունեցած հակա-սովետական բնոյթի անդրբուլղարային բանակցութեան, եւ Պրիսնի եւ Կոմս Աֆորցայի հետ կնքած անջատ համաձայնագրերուն պարագան յայտնի կ'ըլլայ Մոսկուայի մէջ, թուրքերը կեղծաւորութեամբ կ'ըսեն. «Անգարան անտեղեակ էր բանակցութիւններէն», «Պեքիր Սամին գործած է անձնական նախաձեռնութեամբ», եւ իբր հաստատում այս բոլորին, Պեքիր Սամին կը դադրեցնեն արտաքին գործոց նախարարի պաշտօնէն եւ զայն կը փոխարինեն Ֆելիզի Փաշայով եւ ապա՝ Եուսուֆ Բեմալ Պէյով, Մոսկուայի ոտս եւ թուրք պայմանագրութեան կնքումէն ետք(57) : Իրականութիւնը այն էր որ Անգարան հեռադրական ուղիղ կապ կը պահէր Լոնտոնի հետ, եւ ամէն տեղեկութիւն մանրամասնօրէն կը ստանար եւ համապատասխան հրահանգներ կը զրկէր(58) : Ֆրանսայի եւ Իտալիոյ հետ անջատ համաձայնութիւնները ղէպերին յաջորդ օրն իսկ արդէն կը հրապարակուէին «Թայմզ»ի, «Թան»ի եւ այլ թերթերու մէջ : Իսկ Լոյս ձորճի հետ տեղի ունեցած զաղանի բանակցութիւններու մասին օրին տեղեակ եղած էր Մուսթաֆա Բեմալ, խօսակցութիւններու սղարկութեան թարգմանութիւնը ստանալով : Թուրքե-

56. Պրոֆ. Շ. Ռ. Յարութլուեան, Հայ Ժողովրդի Պատմութիւն, հատոր չորրորդ, Երեւան, 1970, էջ 142 :

57. Halide Edib, *The Turkish Ordeal*, p. 13.

58. Նոյնը :

րը վարպետօրէն կիրարկած էին իրենց երկդիմի(59) քաղաքականութիւնը, եւ ապահոված իրենց արեւելեան սահմանը, զաւթելով հայկական հողերը:

Ռուս եւ թուրք պայմանագրի ստորագրութեան օրն իսկ, սովետները Անգլիոյ հետ ստորագրեցին համաձայնութիւն մը, ըստ որուն, սովետները կը հրաժարէին անգլիական զաղութներու մէջ քաղաքացիութենէ, իսկ անգլիական կառավարութիւնը կը պարտաւորուէր նախապէս Յարական Ռուսիոյ մաս կազմող, ու այդ շրջանին անկախ, նորակազմ պետութիւնները շաղաչտպանել: Ալեքսանդր Սատիսեան իր անկիւնէն գիտելով կը գրէ թէ «այդ առաջին հարուածն էր Հայաստանին, որովհետեւ Անգլիան արդէն կը պարտաւորուէր չօգնել Հայերուն՝ իրենց անկախութիւնը վերականգնելու պայքարին մէջ(60):

Երեւանի նոր իշխանութեան տէր՝ «Հայրենիքի փրկութեան կոմիտէ»ի պետը՝ Սիմոն Վրացեան, վստահօրէն անտեղեակ վերելի համաձայնութենէն, 17 Մարտի 1921 թ.ին Անգլիոյ կ'իմացնէր «Սորհըրդային վարչաձեւի տապալումը Հայաստանի մէջ եւ Նորին Վեհափառութեան կառավարութեան կը թելադրէր ճնշում բանեցնել ռուսական կառավարութեան վրայ որպէսզի Հայաստանի վրայ յարձակումը կեցնէր եւ Կարսի ու Ալեքսանդրապոլի պարպումը ապահովէր թուրքերէն»(61): Անգլիական կառավարութիւնը 29 Մարտի 1921 թ.ին Հայաստանի Հանրապետութեան Լոնտոնի մօտ ներկայացուցիչ Զօր. Բարրատունիին կը տեղեկացնէր թէ Լորտ Փըրզոն կը ցաւէր որ ներկայ ժամանակին Նորին Վեհափառութեան կառավարութիւնը ի վիճակի չէ պէտք եղած ազդեցութիւնը բանեցնելու՝ ըլլայ Մոսկուայի, եւ ըլլայ Անգարայի վրայ(62):

Առանց Լոնտոնի ըրած իր աղերսանքին պատասխանը ստանալու, Մոսկուայի պայմանագրի ստորագրութենէն երկու օրեր ետք, 18 Մարտի 1921 թ.ին, Սիմոն Վրացեան թուրքիոյ Ազգային մեծ ժողովին կառավարութեան, որ ճանչցած էր «Հայրենիքի փրկութեան կոմիտէն» որպէս միակ իշխանութիւնը Հայաստանի մէջ, կ'ուղղէր դիմում մը: Դիմումին մէջ Ս. Վրացեան կը խնդրէր որ իր բանակը համարելու համար թուրքեր վերադարձնեն իրենց մօտ եղող հայ պատերազմական գերիները, եւ ցոյց տան ռազմական օգնութիւն Հայաստանի Հանրապետութեան: Սիմոն Վրացեան իր դիմումը կը հիմնէր Ալեքսանդրապոլի դաշնագրին վրայ: Վրացեան կը գրէր. «Սոյն

59. Նոյնը:

60. Ալ. Խատիսեան, Նշ. աշխ., էջ 343:

61. F. O. 371/6266/3476.

62. Նոյնը:

դիմումն անելով, Հայաստանի կառավարութիւնը հիմնուած է այն բարեկամական յարաբերութիւնների վրայ, որոնց հիմք են դրուած Ալեքսանդրապոլի դաշնագրից սկսած եւ որոնք խանդարուած էին բուլշեւիկեան իշխանութեան ժամանակ»(63) :

Այդ օրերուն «Հայրենիքի փրկութեան կոմիտէի» օրկան «Ազատ Հայաստան» թերթը կը դրէր թէ «Իրերի պատմական բերումով Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական ազատութեան իրական պաշտպանը կարող է դառնալ միայն Տաճկաստանը(64) : Որովհետեւ Տաճկաստանն է միակ իրական մերձաւորագոյն քաղաքական ոյժը, որն անմիջապէս եւ կենսապէս շահագրգռուած է Անդրկովկասի ժողովուրդների կատարեալ ազատագրութեամբ»(65) : Թուրքիա թէեւ գո՛հ որ Երեւանի մէջ Ալեքսանդրապոլի դաշնագիրը ընդունող կառավարութիւնը վերստին իշխանութեան գլուխ էր, սակայն Մուկուլայի պայմանագրութեամբ ապահոված ըլլալով իր արեւելեան սահմանը, չուզեց խախտել Սովետական Ռուսիոյ հետ հաստատած իր բարեկամական յարաբերութիւնը, օգնելով հակա-սովետ Հայաստանի Հանրապետութեան :

Ալեքսանդր Խատիսեանի քեմալական արտաքին գործաւար Պեքեր Սամիի հետ Բարքի մէջ ունեցած խօսակցութենէն երեք օր ետք, 26 Մարտի 1921 թ-ին, Սիմոն Վրացեան, որուն կառավարութեան իշխանութեան տակ եղող հոգամասերը Մարտի կէսերուն Կարմիր բանակի յարձակման ենթարկուած էին, հետեւեալ հեռագիրը ուղղեց Անգլիոյ, խնդրելով զայն փոխանցել Լոնտոնի խորհրդաժողովին, որ արդէն 14 Մարտին աւարտած էր .

«Հայաստանը կ'ուզէ ապրիլ խաղաղութեամբ եւ բարեկամութեամբ իր հարեան Թուրքիոյ հետ, ան կ'ուզէ ուրեմն որ Լոնտոնի խորհրդաժողովին տալիք որոշումները փոխադարձ անվստահութիւն չբերեն Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ, եւ կամ՝ դժգոհութիւն : Վերջ : Եւ խաղա՛հ կառավարութեան եւ արտաքին գործոց գործաւար Հայաստանի Հանրապետութեան Վրացեան»(66) :

Վերոյիշեալ հեռագիրը Լոնտոն՝ Ֆորէյն Օֆիսը ստացած էր 29 Մարտի 1921 թ-ին : Ֆորէյն Օֆիսի բարձրատիճան պաշտօնատարներէն Օզպորն, 30 Մարտին հետեւեալ նկատողութիւնը կ'արձա-

63. Պրոֆ. Շ. Ռ. Յարութիւնեան, Նշ. աշխ., էջ 154, Պրոֆ. Մ. Գ. Ներսիսեան իմր., Հայ ժողովրդի Պատմութիւն, Երեւան, 1972, էջ 472 :

64. 1920 թ-ի Նոյեմբերի 20-ին Երեւանի «Յառաջ» բերքը կը գրէր քէ հայ ժողովուրդը պետք է ունենայ «այ քէ ուսական, այլ բուրքական օրինակացի» :

65. Պրոֆ. Շ. Ռ. Յարութիւնեան, Նշ. աշխ., էջ 154 :

66. Բ. Օ. 371/6267/3698.

նագրէր արտաքին դործոց նախարարութեան ատենագրութիւններուն մէջ, հեղնական ոճով մը. «Այնպէս կը թուի թէ զէնքով թուրք մը կեցած էր Պր. Վրացեանի կոնակը երբ այն այս հեռագիրը զրկեց» (67) : Անդրիական կառավարութիւնը Զօր. Բագրատունիի նամակ մը կը զրկէր բացատրութիւններ պահանջելով, բայց այս հարցով պատասխան չէր ստանար :

Քեմալականները՝ Մոսկուայի եւ Լոնտոնի խորհրդաժողովներուն իրենց ներկայացուցիչներուն հետ խորհրդակցելէն ետք այն եզրակացութեան եկած էին թէ արեւմտեան պետութիւններու ըրած զինջումները անբաւարար էին, իսկ Մոսկուայի դաշնագիրը թուրքերոյ ապահոված էր իր փափաքած արեւելեան սահմանները, ուստի՝ Ազգային մեծ ժողովը չվաւերացուց Լոնտոնի անջատ համաձայնութիւններէն ոչ մէկը, եւ չընդունեց Լոնտոնի խորհրդաժողովի առաջարկները :

Անդին, 2 Ապրիլի 1921 թ.ին սովետական զօրամասերու Երեւան մուտքով «Հայկական փրկութեան կոմիտէի» ղեկավարներն ու զօրքերը նահանջեցին Զանգեզուրի ուղղութեամբ, եւ Հայկական ՍՍՀ-ն վերահաստատուեցաւ : Անդրիոյ Ֆորէյն Օֆիսէն Սեսիլ Հարմըզուարթ, 20 Ապրիլի 1921 թ.ի ատենագրութեան մէջ իր տեսանկիւնէն կը զրէր. «Երեւանի մէջ Պր. Վրացեանի կողմէ հակա-բոլշեւիկ կառավարութեան մը վերահաստատումը անկասկած շատ հերոսական ճիգ մըն էր, բայց նկատի առած իր երկրին կատարեալ մեկուսացումը, կը վախնամ ձախողութեան դատապարտուած էր» (68) :

Իսկ Սովետական Ռուսիոյ կառավարութիւնը Ալեքսանդրապոլի եւ շրջակայքի հարցով թիկունք կը կանգնէր Հայկական ՍՍՀ-ին 6 Ապրիլի 1921 թ.ին ՌՍՖՍՀ-ի արտաքին դործոց նախարար Զիչերիի ստորագրութեամբ յուշագիր մը յղելով Մոսկուայի թրքական դեսպան Ալի Ֆուատին, ուր ի միջի այլոց կը զրէր. «Քանի որ Ալեքսանդրապոլի եւ Երեւանի ամբողջ շրջանը կրկին հայկական սովետական կառավարութեան ձեռքին է դառնում, հասել է թուրքական զօրքերի սահմանի այն կողմն անցնելու ժամանակը, որ սահմանուած է Մոսկուայի պայմանագրով, եւ մենք հաստատ յոյս ունինք Ձեզից շտապ պատասխան ստանալու այն մասին, որ հայկական տերիտորիայից թուրքական զօրքերի էվակուացումն (պարպումն) աւարտուած է» (69) : Նոյն օրը Զիչերին՝ սովետ ղեկավար Գ. Կ. Օր-

67. Նոյնը :

68. Նոյնը :

69. Հայաստանը Փաստաթղթերում, էջ 507-508 :

ջոնիկիձէին կը տեղեկացնէր. «Ալի Ծուաաը ինձ խոստացել է անյապաղ աղատել Ալեքսանդրապոլը: Նրան խկոյն եւեթ հաղորդում եմ կարտպեքիրի խուլիզանութեան մասին, մատնանշելով, որ Թուրքիայի եւ Սովետական Հայաստանի միջեւ պատերազմը կը նշանակի պատերազմ Թուրքիայի եւ Սովետական Ռուսաստանի միջեւ»(70):

Քեմալական Թուրքիոյ ռազմական նախարար Քեմալ Ֆելդի Փաշա այդ օրերուն կը յայտարարէ թէ Արեւելեան ռազմաճակատի թըրքական բանակը, մնալով Կովկասի մէջ պէտք է այնտեղ կատարէ հաւասարակշուութեան տարրի դեր... թէ Հայաստանի այն մասը, որ տակաւին թրքական զօրքերու գրաւման տակ է, կը պարպուի Ալեքսանդրապոլի դաշնադիրը գործողութեան մէջ զնեւէն յետոյ միայն(71): Այս յայտարարութիւններուն վրայ 8 Ապրիլի 1921 թ.ին Չիչերին Մոսկուայի մօտ թրքական ղեկավան Ալի Ծուատին յուշագիր մը կը գրկէ, ուր ի միջի ալոց կ'ըսէ. «Ես ինձ թոյլ եմ տալիս Ձեզ յիշեցնել, որ Ալեքսանդրապոլի պայմանադիրը կնքուել է դաշնակցական կառավարութեան կողմից այն պահին, երբ արդէն հռչակուած էր Հայաստանի սովետական կառավարութիւն եւ որ դառաիֆիկացուած (վաւերացուած) չէ, թէպէտեւ, ըստ այդ պայմանադրի տեքստի (բնագիրի), դրա գործողութեան մէջ զնեւել պայմանը հանդիսանում էր ռատիֆիկացիան մէկ ամսում: Բայց եթէ նոյնիսկ մի կողմ թողնենք այդ նկատառումը, ապա Ալեքսանդրապոլի պայմանադրի բոլոր հիմնական դրոյթները մասամբ վերացուած են Մոսկուայի պայմանագրով, մասամբ Սովետական Ռուսաստանի բացարձակ եւ լիակատար սուվերենիտետի (գերիշխանութեան) պահանջան վերաբերեալ երկու պատուիրակութիւնների յայտարարութիւններով: Ալեքսանդրապոլի պայմանադրի կատարումը ցանկալը հաւասարագոր է Մոսկուայի պայմանադրի վերացմանը»(72):

22 Ապրիլ 1921 թ.ին թրքական զօրքերը ետ կը քաշուին Ալեքսանդրապոլի դաւառէն, որ այսօր մաս կը կազմէ Հայկական ՍՍ Հանրապետութեան:

70. Նոյնը, էջ 508:

71. Նոյնը:

72. Նոյնը, էջ 509:

**THE ARMENIAN QUESTION IN THE  
CONFERENCES OF LONDON AND  
MOSCOW IN THE YEAR 1921**

ZAVEN MESSERLIAN

(Summary)

On August 10, 1920, by the Treaty of Sèvres, the Allied Nations oblige the Ottoman Empire to return a good part of the Armenian territories to the Armenians. But the treaty remains on paper only, while the Milly Armies of Turkey rush upon the Republic of Armenia, whose government signs the Treaty of Alexandrapole with Turkey, yielding new territories to her. While the Allied Nations were following the course of the Armenian Question with indifference, Soviet Russia had adopted the policy of winning over the Kemalists, pushing the Armenian Question to a secondary plan. The leaders of Kemalist Turkey having adopted a bifarious policy, were dealing with the Allied Nations and Soviet Russia at the same time, pursuing their own gains on both fronts.

The London Conference began on February 21, 1921. The Armenians joined the conference on February 26, with two separate delegations, lead by Boghos Nubar Pasha and Avedis Aharonian. The positions and demands presented by the Armenian delegations seemed contradictory. The Turks refused the Armenian demands, while the Allied Nations with their separate agreements with Turkey were trying to gain her over to their side. On March 1921, a Russo-Turk conference was held in Moscow, to which the Armenians were refused attendance because of Turkish opposition. The resulting Russo-Turk Treaty of Moscow automatically annulled the Treaty of Alexandrapole. On April 2, 1921, upon the reestablishment of the Soviet regime in Armenia, the Soviets demanded the evacuation of the Turks from the newly occupied territories in Armenia. On April 22, 1921, Turkish armies retreated from Alexandrapole, which was then annexed to Soviet Armenia.

